ԴՅՈՒՂԱՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ IX—X ԴԴ.

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Քննվող ժամանակաշրջանում Վասպուրականի տնտեսական և քաղաքական կյանքի հիմքը երկրագործությունն էր, որի վրա խարսխվում և առաջադիմում էին ֆեոդալական հասարակության կյանքի բոլոր բնագավառները։ Բնականաբար, հիմնական արտադրողը համայնքի բնակիչ շինականն էր։ Այս իրողությունը ցայտուն արտահայտություն է գտել Գրիգոր Նարեկացու «Հարութիւն» տաղում, ուր հաստաբազուկ, լայնաթիկունք շինականը ձայնում է եղանը և առաջ մղում սայլը[1], որ հայտանշում է կյանքի առաջընթացը։ Խոսրով Անձևացին գրում է, որ շինականը «մշակէ զերկիր սերմանաւք կամ տնկովք. և զհասարակաց պէտս լիացուցանէ. ոչ մարգկան միայն այլև զանասնոց։ Եւ հրճուի իւրաքանչիւր ոք ի վաստակս ձեռաց իւրոց։ Եւ հրճուանս այլոց կազմէ և անկարիցն ընծայ բերէ զիւր արդար վաստակոցն»[2]։ «Մատյան ողբերգության» երկում Նարեկացին արարչին համեմատում է մշակի հետ[3], որը նույնպես խորհրդանշում է երկրագործի արարչագործ աշխատանքը։

Քաղաքական ծանր պայմանները, արհավիրքները հաճախ սասանում էին Վասպուրականի տնտեսության զարգացումը։ Թշնամիների հարձակումներից առաջին հերթին տուժում էին գյուղական համայնքների բնակիչները։ Ասպատակություններից խույս տալով, վասպուրականցի գեղջուկը շատ հաճախ հեռանում էր հարևան գավառների լեռնածերպերը[4]։ Բայց հենց որ երկիրը հանդարտվում էր, նա վերստին վերադառնում և տքնում էր իր հողակտորի վրա։ Աբբասյանների տիրապետության տարիներին ծանր հարկերի և քաղաքական անապահով կացության պատճառով Վասպուրականի շինականության զգալի մասը հեռացավ հայրենի գյուղահամայնքից (ի դեպ, Աբբասյանները չէին արգելում գյուղացիների հեռացումը երկրից)[5]։ Բայց եթե անգամ մնում էր բնակչության մեկ քառորդը, համայնքը գոյատևում էր և ավելի ծանր պայմաններում կատարում հարկային պարտությունները, քանի որ Աբբասյանների օրոք համերաշխիքի սկզբունքը հարկադրում էր, որպեսզի համայնքի բնակիչները հարկ վճարեն նաև հեռացածների փոխարեն (խալիֆայությունում ընդունված կարգի համաձայն հարկը գանձվում էր ոչ թե անհատներից, այլ համայնքից)[6]։ Համայնքի իրավունքները ճանաչվում էին արաբների կողմից։

---

1 «Գրիգորի Նարեկայ Վանից Վանականի Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 473—474։

2 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2607, թ. 38բ։

3 Գրիգոր Նարեկացի, էջ 157։

4 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 270, 328 և այլն։

5 Baladhuri, The origins of the islamic state (Kitab Futuh al-Buldan), vol. I, New-York, 1916, p. 338.

6 Abou Jousouf Ja'koub, Le Livre de l'impot foncier (Kitab el-Kharadj), Paris, 1921, p. 116—117.

Մուկթադիր խալիֆան 923 թ. նույնիսկ հրաման արձակեց, որով համայնքի անզավակ քրիստոնյաների ժառանգությունը մնում էր ոչ թե պետությանը, այլ վախճանվածի համայնքին[7]։ Աբբասյանների օրոք Հայաստանի երկրագործ բնակչությունը նվազեց, պատմիչի արտահայտությամբ՝ «երկրագործք մեր սպառեցան»[8]։ Այդ հանգամանքը չէր կարող բացասաբար չանդրադառնալ համայնքների կացության վրա։

Սովորական, խաղաղ պայմաններում գյուղաբնակչությունը կենտրոնանում էր բերրի հողերում։ Այդ իսկ պատճառով Վասպուրականի դաշտային մասերում բնակավայրերը համեմատաբար բազմամարդ էին։ Ըստ Թովմա Արծրունու, այնտեղ առկա էին «զբազմամարդի գեօղս և աւանս»[9]։

Գյուղական համայնքների աշխատունակ բնակիչների թիվը և երդերի ունեցվածքը հաշվառելու համար Վասպուրականում կատարվել են աշխարհագրեր, որոնց շնորհիվ պարզվել են համայնքների հարկային և գանձահասութային հնարավորությունները։ Աշխարհագիրը կոչվել է նաև «մարդահամար», որն անցկացնելիս անտեսվել են անաշխատունակները, ուստի վերջիններիս Գրիգոր Նարեկացին հորշորշում է «զվիժած... ի մարգկանէ համարոյ»[10]։ IX—X դդ. Վասպուրականի գյուղահամայնքների բնակիչները հիմնականում կախյալ և ազատ գյուղացիներն էին։ Կախյալ գյուղացու առկայությամբ ֆեոդալն ավելի էր շահագրգռված, քանի որ նրա անձնական տնտեսության՝ կալվածքի, մեջ կիրառվում էր հիմնականում կախյալ գյուղացիների և ճորտերի աշխատանքը։ Հաճախ ազատ գյուղացին վերածվում էր կախյալի՝ պետության նկատմամբ ունեցած հարկային և այլ պարտությունների կատարման մեջ թերանալու պատճառով։ Ուստի գյուղացու «ազատ» հորջորջումը պայմանական հասկացություն էր, և գյուղացին երբեք ազատ չէր կարող լինել պետության նկատմամբ հարկային պարտավորություններից (ինչպիսին էր ֆեոդալ-ազատը)։ Վասպուրականում, աղբյուրների վկայությամբ, ամբողջ շեներ կախման մեջ էին դրվում ֆեոդալից, եկեղեցուց։ Այսպես, երբ Գագիկ Արծրունու կին Մլքեն կառուցել տվեց Վարագա վանքի ս. Աստվածածին եկեղեցին, նրան նվիրեց կալվածներ՝ գյուղերով[11]։ Երբեմն գյուղահամայնքներն իշխանների կամքով տեղահանվում էին։ Օրինակ՝ Գագիկ Արծրունին մի ձեռակերտի կառուցման համար տեղահանեց ամբողջ գյուղեր[12]։ Երբեմն գյուղերն ու ագարակները ընծայվում էին[13]։ Ուրեմն վերջիններս կախյալ էին։ Նման դեպքերում կախյալ գյուղացին բնականաբար կորցնում էր տարիներով մշակած անդաստանը։ Նա նոր վայրում ֆեոդալից ստանում էր հողակտոր, որի դիմաց կատարում էր զանազան պարտություններ։ Գյուղացիության կախվածությունը դրսևորվում էր նաև այլ պարհակների

---

7 А. Мец, Мусульманский ренессанс, М., 1973, стр. 102.

8 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 257։

9 «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 213։ Համայնքը միավորում էր ոչ միայն առանձին երդերը, այլև երբեմն գյուղերը, իսկ Ս. Հակոբյանի կարծիքով՝ նաև ավանները (Ս. Ե. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. 2, Երևան, 1964, էջ 134)։

10 Գրիգոր Նարեկացի, էջ 47։

11 Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հ. 1, Վենետիկ, 1914, էջ 388։

12 Թովմա Արծրունի, էջ 411։

13 Նույն տեղում, էջ 369։

կատարման մեջ։ Գյուղացիները մասնակցում էին բերդերի, պալատների, եկեղեցիների, ճանապարհների, կամուրջների կառուցմանը կամ նորոգմանը, երբեմն կատարում պարհակային ծառայություն և այլն։ Թովմա Արծրունու շարունակողը վկայում է, որ Աղթամարի տաճարի և պալատի կառուցմանը մասնակցում էին նաև ռամիկները[14]։ Գագիկ Արծրունին «հրաման տայցէ, զի լինիցի տեղի ապաստանի ամենայն հինից և թշնամեաց եկելոց. և թագաւորն գթացեալ ոչ արգելու զինդրեալ պարգևսն»[15]։ Դրանից հետո շատերը գալիս են բնակվելու Աղթամարում։ Սակայն պատմիչի վկայությունից երևում է, որ Աղթամարում վերաբնակվողները հաճույքամբ չեն եկել, քանի որ Գագիկ Արծրունին ստիպված է եղել թե՛ իրավական և թե՛ նյութական արտոնություններ շնորհել նրանց։ Ուրեմն, եկողները (որոնց մեծ մասը պետք է լինեին գեղջուկներ) ոչ թե փախել են իրենց համայնքից, այլ հրապուրվել են արքայի խոստումներով։ Շինականը հասկանում էր, որ մի ֆեոդալից մյուսի մոտ անցնելով ոչնչով չի փոխի իր վիճակը։ Իհարկե, բացառված չէ, որ ինքնուրույնության հակված գեղջուկը (որին հիշում է Նարեկացին)[16] գյուղից հեռանար քաղաք՝ ֆեոդալական կախվածությունը թեթևացնելու հույսով։ Աղթամարի տաճարի և պալատի կառուցումը վկայում է, թե ինչպիսի մեծ նշանակություն ունեին գյուղահամայնքների բնակիչները նոր քաղաքների ոչ միայն կառուցապատման, այլև բնակեցման գործում։ Պետք է կարծել, որ Գագիկի հրամանը տարածվել է նաև Վասպուրականից դուրս ապրողների վրա[17]։

Գյուղացիության ամենաստորին խավը, որը Վասպուրականում անվանվում էր «ծառա», իրավազուրկ էր, զուրկ տեղաշարժման իրավունքից, հողակտորից։ Գրիգոր Նարեկացին երբեմն հիշում է ծառաներին «փախստական» մակդիրով[18]։ Դրանից պետք է եզրակացնել, որ ծառաները ոչ միայն զուրկ են եղել ֆեոդալից հեռանալու իրավունքից, այլև երբեմն բողոքել, ընդվզել, փախել են տիրոջ մոտից։ Ծառաները ստրուկների վիճակում էին։ Նարեկացին գրում է. «Ծառայութեան լուծ սաստկացաւ, ստրկութեան կապ զօրացաւ»[19]։ Նարեկացին հիշում է «Ծառայս վնասապարտս»[20], նշում, որ հանցապարտ, «չար» ծառաներին վիճակվում էր «բրելոյ զաչսն», «ծայրատութիւն մատանցն» կամ գլխատում[21]։ Խոսրով Անձևացին, որպես հակընդդեմ խավեր, հիշում է «տէրանց և ծառայից»[22]։ Մատենագիրները Վասպուրականում ֆեոդալների տներում նույնպես հիշում են ծառաների։ Կարծեցյալ Շապուհը նշում է, որ Վասպուրականի կառավարիչ Գագիկ Ապումրվանը ծառաներ ուներ[23]։ Հիշվում են նաև կին ծառաները՝ աղախինները[24]։ «Ծառա» հա-

14 Նույն տեղում, էջ 480։
15 Նույն տեղում։
16 Գրիգոր Նարեկացի, էջ 143։
17 Հմմտ. ձեռ. № 5467, թ. 12ա։
18 Գրիգոր Նարեկացի, էջ 51։
19 Նույն տեղում, էջ 56։
20 Նույն տեղում, էջ 208։
21 Նույն տեղում, էջ 190—191։
22 Խոսրով Անձևացի, Մեկնություն ժամակարգության, Օրթագյուղ (Կ. Պոլիս), 1840, էջ 182։
23 «Պատմութիւն Անանուն զրուցագրի, Կարծեցեալ Շապուհ», Երևան, 1971, էջ 167։
24 Թովմա Արծրունի, էջ 426, Գրիգոր Նարեկացի, էջ 82։

մարվող գյուղացիները, որպես կանոն, գիտեին միայն մեկ տիրոջ[25], հանգամանք, որը նույնպես վկայում է տեղաշարժման իրավունքից նրանց զուրկ լինելու մասին, մինչդեռ կախյալ գյուղացիներն օգտվում էին այդ իրավունքից։

Կախյալ գյուղացիները և ծառաները բնակվում էին նաև ագարակներում. որոնք IX—X դդ. իրենց հողերով, արոտատեղերով, առուներով և այլն գտնվում էին ֆեոդալի լիակատար տնօրինության տակ։ Սկզբնաղբյուրների հավաստմամբ՝ իշխանները վանքերին ու եկեղեցիներին հաճախ ընծայում էին նաև ագարակներ։ Այսպես, օրինակ, Գագիկ Արծրունին և իր եղբայրները Ս. Խաչ վանքին են նվիրել հինգ ագարակ[26]։ Խալիֆայի զորապետերին տրվելիք բնակավայրերի թվում գյուղերի կողքին հիշվում են նաև ագարակներ[27], որոնք նույնպես ունեին եկեղեցի[28]։ Ագարակներ էին համարվում նաև մշակված հողակտորները, անդաստանները, իհարկե, ֆեոդալի սեփական տնտեսության մեջ[29]։ Դրանք մշակում էին կախյալ գյուղացիները և ծառաները։ Այս ի նկատի ունի Խոսրով Անձևացին, գրելով. «ծառային, որ յագարակէն գայցէ»[30]։

Ագարակները նույնպես կազմում էին համայնքներ։ Ֆեոդալներն ավելի շահագրգռված էին ագարակների տնտեսությամբ, որը ենթակա էր իրենց անմիջական տնօրինությանը։ Հավանաբար, սկզբնապես ագարակները եղել են ավաններին կից տնտեսություններ։ Մովսես Խորենացին գրում է, որ հայոց Արտավազդ արքան իր մերձավորներից մեկին «որ խնամեցեալ էր ընդ նախարարս Վասպուրականի», տվել էր «զաւանն Տատեօնս հանդերձ ագարակօքն»[31]։ Ագարակը կարող էր հիմնվել ֆեոդալի կողմից։ Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ Աշոտ Բագրատունին «զամենայն տափարակ տեղիս՝ ագարակս և գոմս դներ»[32]։ Ագարակները տնտեսապես զարգանալով երբեմն վերաճում էին ավանների (կամ միանում նրանց)[33]։ Ուշագրավ է, որ մատենագիրների մոտ ագարակը հիշվում է մեծ մասամբ ավանի հետ կողքկողքի։ Թովմա Արծրունին հիշատակում է «գեօղ, ագարակ, աւան», «զշէնս և զաւանս և զագարակս»[34], Հովհաննես Դրասխանակերտցին՝ «զքաղաքս և զգեօղս և զաւանս և զագարակս», կամ՝ «զգեօղս և զաւանս և զագարակս»[35] և այլն։ Ուրեմն ագարակները բազմաթիվ էին։ Դրանից միաժամանակ երևվում է, որ ագարակները շեներից (գյուղերից) և ավաններից տարբեր էին։ Եթե նույնը լինեին (ինչպես, օրինակ, շենն ու գյուղը), մեկնումեկը միայն կօգտագործվեր։ Բնականաբար, գյուղերի և ագարակների բնակիչները չէին կարող նույնիրավ լինել, քանի որ ագարակները ֆեոդալի սեփական տնտե-

25 Ձեռ. № 911, թ. 99ա։
26 Թովմա Արծրունի, էջ 369։
27 Նույն տեղում, էջ 222, 242, 397։
28 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 199։
29 Թովմա Արծրունի, էջ 158։
30 Ձեռ. № 2607, թ. 23ա։
31 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 263։
32 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 139։
33 «Ստեփանոսի Տարօնեցւոյ (Ասողկան) Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 161։
34 Թովմա Արծրունի, էջ 214, 251 և այլն։
35 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 259, 261, 360։

սության մասն էին, որոնց բնակիչներն անմիջաբար շահագործվում էին նրա կողմից։ Ագարակների բնակիչները, մեր կարծիքով, պետք է մտնեին շինականների դասի մեջ՝ նրանց հետ հանդես գալով որպես ազատ դասին հակադիր խավ (հիշենք, որ 444 թ. Շահապիվանի ժողովի կանոններում «շինական»՝ բառը գործ է ածվել «ազատ» բառին հակադիր նշանակությամբ)։ Բայց ագարակաբնակները ենթարկվում էին ֆեոդալական ավելի բիրտ շահագործման և իրավական ավելի ցածր աստիճանում էին, քան գյուղերում ապրողները։ Այս է պատճառը, որ ըստ Մխիթար Գոշի գեղջուկներին իրավական առումով նախապատվություն պետք է տրվի ագարակների բնակիչների նկատմամբ[37]։ Գյուղահամայնքի բնակիչները ենթակա էին ամեն տեսակ պատահարների, որոնք լրացնում էին «տաժանումն հողագործի»[38]։ Անանիա Նարեկացու վկայությամբ՝ շինականները մշտապես ենթակա էին արհավիրքների՝ «ի գերողաց, ի գազանաց, ի թշնամեաց»[39]։ Խոսրով Անձևացին ևս վկայում է նույնը, շեշտելով նաև սովի աղետաբեր հետևանքները[40]։

Հայ մատենագրության մեջ «համայնք» տերմինը բացակայում է։ Սովորաբար հիշվում է շինականների բնակության վայրը՝ «գեօղ»-ը, բայց չի հիշվում նրանում հասարակական կազմակերպության՝ համայնքի, առկայության մասին։ Անշուշտ համայնքին փոխարինող արտահայտություն եղել է։ Մեր կարծիքով, այն «տուն» բառն է, որը ներառնում է բնատարածքային և տոհմական հատկանիշները (նկատենք, որ համայնքը ինչ-որ չափով տոհմական կարգերի մնացուկ էր)։ Գրիգոր Նարեկացու մի արտահայտությունից երևում է, որ համայնքն անվանվել է «տուն», որի գլուխ կանգնած տանուտերը կամ գեղջավագը «ընդ իւրում տանն հոգայ»[41]։ Համայնքի ավագին տանուտեր է անվանում նաև Խոսրով Անձևացին[42]։ Այս պարագան ևս վկայում է, որ համայնքը կոչվել է «տուն»։ Գյուղի, շենի անուններով համայնքի բնակիչների անվանումը («գեղջուկ», «շինական») նույնպես վկայում է համայնքային սկզբունքի առկայության մասին։ Այն ցույց է տալիս, որ միևնույն բնակավայրում ապրող շինականները համարվում էին այնտեղ գոյություն ունեցող հասարակական-տնտեսական միավորի՝ համայնքի, նույնիրավ անդամներ և անվանվում նույն կերպ։

Համայնքը որպես «տուն» դիտելու հանգամանքը սերտորեն կապված էր որոշակի սահմանների առկայության, ինչպես նաև հողերի պարբերաբար վերաբաժանման հետ։ Թովմա Արծրունին վկայում է, որ IX դ. կեսին Վասպուրականը ժամանակավորապես գրաված արաբ զորավարները երկիրը միմյանց միջև բաժանելիս «արկանէին վիճակս. և լարս ձգէին ի վերայ սահմանաց»[43]։ Հ. Մանանդյանն իրավացիորեն նշում է, որ այս վկայությունն

36 «Կանոնագիրք Հայոց», Ա, աշխատասիրությամբ Վ ա ղ գ ե ն Հ ա կ ո բ յ ա ն ի, Երևան, 1964, էջ 433—434։

37 Մ խ ի թ ա ր Գ ո շ, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խ ո ս ր ո վ Թ ո ր ո ս յ ա ն ի, Երևան, 1975, էջ 32։

38 Գ ր ի գ ո ր Ն ա ր ե կ ա ց ի, էջ 524։

39 Ձեռ. № 3477, թ. 203ա։

40 Ձեռ. № 2607, թ. 136բ, Խ ո ս ր ո վ Ա ն ձ և ա ց ի, էջ 33։

41 Գ ր ի գ ո ր Ն ա ր ե կ ա ց ի, էջ 361։

42 Խ ո ս ր ո վ Ա ն ձ և ա ց ի, էջ 245։

43 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի, էջ 251։

ավելի շուտ արտահայտում է Հայաստանում (տվյալ դեպքում Վասպուրականում) ընդունված հողաբաժանության սովորական կարգը[44]։ Ինչպես հավաստում է Թովմա Արծրունին, Գագկակերտի շինության պատճառով Գագիկ Արծրունին «դարձոյց անդ զսահմանս անդր փոխելոյ գեօղիցն»[45]։ Գյուղահամայնքների դաշտերի սահմանները չափել, նախապես գծել են թղթերի, մագաղաթների վրա։ Հակոբ Նարեկացի մատենագիրն այս մասին գրում է. «զդաշտս բազում տահմանօք և ասպարիսօք ի տարածումն լայնութեան քարտիսի չափեցից»[46]։

Չափվել են նաև համայնքի բնակիչների հողակտորները։ Ճանապարհներին մոտ ընկած ցանքսերը, այգիները ցանկապատվում, երբեմն ցեխապատերով պարսպվում էին, քանի որ հակառակ պարագայում «զանդաստանս աւտարականք և անցաւորք ապականեն», իսկ «անդաստանն պարսպեալ՝ ծաղկալի և արգաւանդապտուղ լինի»[47]։ Այդպիսով այն զերծ կմնար «օտար խաշանց... և խոզաց կերակուր» դառնալուց[48]։ Ն. Ադոնցի կարծիքով՝ գյուղացու հողաբաժինը կոչվել է «կեանք», «արար» կամ «կալուած»[49]։ Հ. Մանանդյանը, մերժելով Ն. Ադոնցի տեսակետը, գտնում է, որ գյուղացիական հողաբաժինը, որպես վիճակարկությամբ ու լարաձգությամբ ստացված հողամաս, կոչվել է «վիճակ»[50]։ «Արար» բառը թերևս ունի նաև իր ջանքերով արարված, ստեղծված հարստության, ունեցվածքի, այդ թվում և շենքի, կալվածքի իմաստ։ Այս առումով ուշագրավ է Ղազար Փարպեցու «Թղթի» մի դարձվածքը՝ «յարձակեցան յարարս իմ և գիշատեցին յանխնայ»[51]։ Այն ունի ոչ միայն շարժական, այլև անշարժ գույքի իմաստ։ Իսկ «վիճակ» բառը հավանաբար ունեցել է նաև գյուղի, նույնիսկ երկրի, գավառի իմաստ։ Ագաթանգեղոսը հիշում է «յիւր վիճակն զՀայաստան երկիրն»[52]։ «Հայոց Կանոնագրքում» հանդիպում ենք «վիճակին եւ աշխարհին»[53], ինչպես նաև «յայլոյ վիճակէ, յայլոց գաւառէ»[54] դարձվածքներին, որոնք նույնպես վկայում են այս տերմինների իմաստային աղերսը։ Ըստ երևույթին «վիճակ» բառն ուներ նաև սահմանված կացություն, կարգ, կազմակերպություն իմաստը։ Կանոնագրքում հանդիպող «ի բաժին, եւ ի վիճակ եւ ի ծառայութիւն»[55] դարձվածքը հավանաբար այդ առումով է գործածվել։ Նույնն է նաև «ի վիճակի կարգ» արտահայտությունը[56]։ Կացություն, կարգ, կազմակերպություն՝ իմաստն ունի նաև «ի վաճառս, ի գինեմորս, յերդս, ի տունս անհաւատից և յայլոց վի-

44 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 204։

45 Թովմա Արծրունի, էջ 411։

46 Ձեռ. № 3477, թ. 203ա («քարտէս» բառն այստեղ ունի թղթի, մագաղաթի իմաստ)։

47 Ձեռ. № 2607, թ. 37բ, 38ա։

48 Գրիգոր Նարեկացի, էջ 308։

49 Н. Адонц, Армения в эноху Юстиниана, Ереван, 1971, стр. 480. Մովսես Խորենացին հիշում է կողք-կողքի «արարս եւ գիւղս եւ զդաստակերտս» (Մովսես Խորենացի, էջ 310)։

50 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 198—199, 201—204։

51 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1907, էջ 426։

52 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, էջ 466։

53 «Կանոնագիրք Հայոց», Ա, էջ 113։

54 Նույն տեղում, էջ 118։

55 «Կանոնագիրք Հայոց», Բ, Երևան, 1971, էջ 209։

56 Նույն տեղում, էջ 196։

Հակս»[57] դարձվածքը։ Ինչպես տեսնում ենք, տունը ևս անվանված է «վիճակ»։ Կարելի է կարծել, որ վիճակ բառով նշվել է նաև համայնքը՝ որպես գյուղացիության կազմակերպման ձև։ Մխիթար Գոշը գրում է, որ համայնքներում հողաբաժանումը կատարվել է «հաւասարադատութեամբ»[58], սակայն գրանցում առկա է եղել գույքային շերտավորում։ Տանուտերը հողաբաժանման ժամանակ ստացել է «մասն աւելի»[59]։ Դվինի 648 թ. ժողովի կանոններում ասվում է. «ոմանք յագատաց և յռամիկ հեծելոց հատանելով ի գեաւղս ուրեք, թողեալ զգեաւղն ի վանսն առնեն զիշաւանսն... եւ գուսանաւք եւ վարձակաւք պղծեն գնուիրեալ տեղիսն Աստուծոյ»[60]։ Եթե ռամիկը ձի ուներ և կարող էր հանձնվել խրախճանքի, այն էլ գուսանների ու վարձակների հետ, ապա դա վկայում է նրա ընչավետության մասին։ Թերևս այդ հանգամանքն է կանոնները կազմողներին թույլ տվել վերջիններիս դնելու ազատների կողքին։

Նոր հիմնված գյուղահամայնքներում հողաբաժանումը հաստատուն հիմքերի վրա էր դրվում միայն որոշակի թվով բնակչության առկայության դեպքում։ «Ցորժամ զառաջինն շինիցի գիւղ, չէ հաստատուն բաժանումն հողոյն եւ ջրին եւ այլոց այսպիսեաց, մինչեւ բաւական բնակիչք ժողովիցին, եւ ապա բաժանումն հաստատիցի»[61]։ Համայնքը, որպես կազմակերպություն, ավելի ազդեցիկ կարող էր դառնալ իր բնակչության թվով։ Համայնքը և՛ որպես կազմակերպություն, և՛ որպես ուժ ի նկատի ուներ Դվինի 648 թ. ժողովը, երբ նշում էր «շինական իշխանության» մասին[62]։

Համայնքի կամ տան ղեկավարը՝ տանուտերը (գեղջավագ) չէր դասվում ազատանու կարգը։ Հովհաննես Կողեռնի Տեսիլքում տանուտերերը թեև հիշվում են ազատների կողքին[63], բայց նրանք տարբերվում էին վերջիններից, այլապես առանձին չէին հիշվի։ Համայնքների տանուտերերը ունեին մեծ ազդեցություն շինականների վրա։ Խոսրով Անձևացու «Բանք տեղի աղօթից» գործում նշվում է, որ շինականները գեղջավագներին պաշտում էին աստծու պես, որ «ոչ աստուածայ՝ այլ մարդկան զնորա նմանին պաշտաւն զի առաւագս գիւղիցն ի պաշտօն ժողովին. ոչ աստուածայ այլ նոցա պաշտօն տանել. որպես թե գերագոյն նոքա քան զաստուած իցեն. զաստուծոյ տամբք զանց արարեալ զնոցա տունսն նախամեծար առնեն»[64]։ Այս վկայությունից երևում է, որ համայնքի ներքին գործերը կարգավորելու համար գեղջուկները հավաքվել են և տանուտերերի հետ վճռել համայնքի հետ կապված հարցերը։ Հավանաբար, տվյալ դեպքում տանուտերերին պաշտելու հանգամանքը արդյունք էր գյուղացիների մեջ հող գտած աղանդավորական (անշուշտ թոնդրակյան) գաղափարների ազդեցության։ Եկեղեցին համարվում էր «քաղաք անմահ արքային»[65], ուստի, Խոսրով Անձևացու «զաստուծոյ տամբք զանց արարեալ» խոսքերը վկայում են, որ գեղջուկներն ինչ-որ չափով մեր-

57 Նույն տեղում, էջ 116։
58 Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 390—391։
59 Նույն տեղում, էջ 391։
60 «Կանոնագիրք Հայոց», Բ, էջ 211—212։
61 Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 127։
62 «Կանոնագիրք Հայոց», Բ, էջ 209։
63 Ձեռ. № 4682, թ. 12բ։
64 Ձեռ. № 6302, թ. 73ա—բ։
65 Ձեռ. № 8343, թ. 55ա։

ժել են աստծո տունը՝ եկեղեցին[66]։ Տանուտերերի ազդեցիկ դերը բխում էր հիմնականում նրանց հասարակական գործառնությունից, որը չէր սահմանափակվում միայն աշխատանքների, զանազան պարտույթների կատարմամբ։ Տանուտերերն էին լուծում շինականների միջև ծագած վեճերը և այլն։ Խոսրով Անձևացին գրում է. «Որքան հսկէ տանուտէրն, գողք ոչ կարեն ական հատանել և գողանալ, այլ խոյս տուեալ փախիցեն»[67]։ Ֆեոդալ-հողատերը քիչ էր խառնվում համայնքի ներքին գործերին։ Բայց նա շահագրգռված էր գյուղացու ֆիզիկական գոյությամբ, քանի որ հողն առանց մշակողի արժեք չուներ։ Այս միտումով էր, որ Վասպուրականի ֆեոդալները պատերազմների ժամանակ տեղահանում ու անմատույց վայրերն էին գաղթեցնում շինականներին։ Թովմա Արծրունին գրում է, որ Արյան լիճ հովտի մարտում Վասպուրականի ազատները «եդին զանձինս ի վերա բազմութեան... ամբոխիցն, իբրև զքաջ հովիւ ի վերայ խաշանց մեռանել յանձն առին»[68]։

Օտար տիրապետության պայմաններում Վասպուրականի ֆեոդալներն ամեն ջանք գործադրում էին, որպեսզի գյուղացիությունը հարկը վճարի իրենց[69] և ոչ թե օտար տիրողներին, կամ որպեսզի իրենք հավաքեն հարկերը և փոխանցեն Արմինիայի ոստիկանին։

Արաբների հաճախակի հարձակումների հետևանքով Վասպուրականի գյուղահամայնքների բնակչությունը նոսրանում էր, երբեմն վերանում էին ամբողջ համայնքներ, խաթարվում երկրամասի տնտեսության բնականոն զարգացումը։ Այսպես, օրինակ, Բուղայի ասպատակության տարիներին (851—853) սկսեցին «աներկիւղ համարձակութեամբ սփռել տարածանել ի վերայ երեսաց երկրիս ամենայն ազգքն տաճկաց»[70]։ Համայնքների բնակիչները հարկ եղած դեպքում մարտի էին ելնում ընդդեմ Վասպուրական ներխուժած թշնամիների[71]։ Ուշագրավ է, որ ֆեոդալական ընդհարումների ժամանակ, ինչպես երևում է Թովմա Արծրունու վկայություններից[72], ֆեոդալները չէին հենվում շինականության վրա, որի համար միևնույնն էր, թե որ հայ ֆեոդալի գերիշխանությանն է ենթարկվելու, քանի որ շահագործման ձևը դրանից չէր փոխվելու։

Գյուղահամայնքների բնակիչները հաճախ մշակում էին խոպան հողեր։ Դա օրենքով խրախուսվում էր։ Աբու Յուսուֆը վկայում է, որ խալիֆայության համակարգում եթե գյուղացին մշակում էր խոպան, անմշակ հողը, ապա

---

66 Գրիգոր Նարեկացին «Կարգ և կանոն աղօթից» գործում նույնպես գրում է, որ «ոմանք ...խաբեությամբ և ոչ տիրով կան յաղաւթս» (ձեռ. № 3676, թ. 75ա)։

67 Խոսրով Անձևացի, նշվ. աշխ., էջ 245։ Հողաբաժանման ժամանակ գեղջավագի՝ ավելի մեծ բաժին ստանալը վարձատրություն էր նրան՝ «վասն հոգալոյ զայլսն» (Մխիթար Գոշ, Դիրք դատաստանի, էջ 391)։

68 Թովմա Արծրունի, էջ 242։ Սեբեոսը գրում է, որ VI դ. կեսին՝ արաբական արշավանքների շրջանում, հայ նախարարները «միաբանեցան, արարին ընդ միմեանս հաշտութիւն, զի մի եղիցի ի մեջ նոցա սուր և արիւնհեղութիւն... զի և զշինականսն ապրեցուցանեն» (Սեբէոս, Պատմութիւն ի Հերակլն, Թիֆլիս, 1913, էջ 238)։

69 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 270։

70 Թովմա Արծրունի, էջ 251։

71 «Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի հայոց», ս. Պետերբուրգ, 1887, էջ 142, Թովմա Արծրունի, էջ 202, 244։

72 Թովմա Արծրունի, էջ 311—312։

ստացված բերքն ամբողջությամբ պատկանում էր մշակողին[73]։ Խալիֆայությանը ենթակա երկրներում երեք տարի անմշակ թողնված հողին տիրելու իրավունք էր ստանում այն մշակողը[74]։ Այս օրենքը կիրառվում էր նաև Հայաստանում։ Մխիթար Գոշի հավաստմամբ եթե շինականը մշակում էր խոպան հողը, ապա այն դառնում էր նրա ժառանգական սեփականությունը[75]։

Խիստ դժվար էր նոր հողերի յուրացումը։ Անտառաշատ վայրերում այդ նպատակով կիրառվում էր անտառահատումը։ Թովմա Արծրունուն ծանոթ է հողամշակման այն ձևը, երբ հողը «ոռոգեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ նրկմատանի փայտատովք սերմանեալ»[76]։ «Ի միջոցս պրակացն» արտահայտությունից երևում է, որ անտառները մաքրվել են և վերածվել մշակելի հողերի։ Անտառահատման ժամանակ օգտագործվում էր «փայտատը» (կամ կացինը)[77]։ Գրիգոր Նարեկացին ևս հիշում է, որ անտառները հատել են «տապարաւն արմատակտրաւ», ապա դարձրել մշակելի[78]։ Թովմա Արծրունին հիշատակում է «առուամէջ այգեստանեայք»՝ առվով անջրպետվող այգիներ[79]։ Ուրեմն, գետահովիտներում նույնպես այգիներ են գցվել, որոնք անջրպետվել են առուներով։

Գյուղահամայնքներում արմատացած սովորությամբ վարելահողերը ցանում և բերքը հավաքում էին որոշակի ժամանակում, որը պարտադիր էր համայնքի բոլոր անդամների համար։ Դրանով էր ապահովվում նաև հարկերի, հողային ռենտայի կանոնավոր մուծումը։ Խոսրով Անձևացին գրում է. «թէ ոչ աշխատի մշակն՝ ոչ հնձէ ըզպտուղն ի դէպ ժամանակի։ Այս է ժամանակ գործոց և աշխատութեան. այս է ժամանակ սերմանելոյ»[80]։ Հաճախ գեղջուկն ստիպված էր լինում գիշերով հերկել դաշտը[81], որպեսզի ապահովի երկրագործական աշխատանքների կանոնավոր հերթագայումը։ Գեղջուկի արտն ու անդաստանը ենթակա էին ամեն տեսակ պատահարների, հաճախ բերքը ոչնչանում էր «ի կարկտէ, ի մարախոյ, յերաշտութենէ և այլ ամենայն պատահարից», նաև ջրի պակասից՝ ինչպես վկայում է Անանիա Նարեկացին[82]։ Մեծ էր նաև մորեխի հասցրած վնասը (այս մասին հիշում է Արամ Մատենագիրը՝ Վասպուրականի Անձևացիք գավառի իշխան Ատոմին գրած թղթում)[83]։ Երկրագործական վնասատուների դեմ պայքարի հնարավորությունները, իհարկե, սահմանափակ էին։ Թեև կիրառվում էին որոշ միջոցներ (Գրիգոր Նարեկացին, Թովմա Արծրունին հիշատակում են ծծումբը և այլն)[84], բայց շատ դեպքերում հնարավոր չէր լինում փրկել գյուղացու տքնաջան աշխատանքով աճեցված բերքը։

---

73 Abou Jousouf, p. 140.
74 Նույն տեղում, էջ 91։
75 Մխիթար Գոշ, Դիրք դատաստանի, էջ 32։
76 Թովմա Արծրունի, էջ 203։
77 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 275 («զանտառս փայտից փայտատով կոտորեցին»)։
78 Գրիգոր Նարեկացի, էջ 32։
79 Թովմա Արծրունի, էջ 424։
80 Ձեռ. № 8343, թ. 38բ։
81 Ձեռ. № 2607, թ. 119բ։
82 Ձեռ. № 3477, թ. 215ա։
83 Ձեռ. № 3710, թ. 322ա։
84 Գրիգոր Նարեկացի, էջ 503, Թովմա Արծրունի, էջ 219։

Այսպիսով, Վասպուրականում ևս երկրագործական կյանքի կազմակերպման հասարակական հիմքը գյուղական համայնքն էր։ Նրա շնորհիվ էր պահպանվում և առաջադիմում այդ երկրամասի տնտեսությունը։ Համայնքային կազմակերպությունը պետական-քաղաքական ձեերից ավելի կենսակայուն էր, քանի որ այն ներկայացնում էր աշխատավոր ժողովրդին և հանդիսանում նրա միասնության, համախմբման գրավականը։ Այն միաժամանակ պետականությունը կորցրած ժողովրդի գոյապահպանման հասարակական-տնտեսական հիմքն էր։

СЕЛЬСКИЕ ОБЩИНЫ В ВАСПУРАКАНЕ В IX—X вв.

ВРЕЖ ВАРДАНЯН

Резюме

Основой организации земледельческой жизни в Васпуракане являлась сельская община. В целях выяснения налоговых и хозяйственных возможностей общин в Васпуракане проводились переписи, благодаря которым учитывались трудоспособные жители общин, а также имущество дымов. Общины Васпуракана IX—X вв. в основном состояли из зависимых и свободных крестьян. По свидетельству источников, иногда целые общины ставились в зависимость от феодалов или церкви. В армянских источниках отсутствует термин «община» (*«համայնք»*), который, как надо полагать, заменялся термином «дом» (*«տուն»*). Хотя общины юридически и были равноправны (даже глава общины — танутер—не ставился за рамки крестьянского сословия), однако с усилением феодальной эксплуатации увеличивалось число зависимых крестьян. Жители общин иногда осваивали новые земли или покидали полученные от феодала земельные участки из-за незначительной прибыли.